ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 59-66-43, ֆաքս 55-12-59

№ 2/5-1-464 «27» 02 2014 թ.

Ձեր

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ
պարոն Շավարշ Քոչարյանին

Հարգելի պարոն Քոչարյան

Ի պատասխան Ձեր 21.02.2014թ. թիվ 1111/01661 գրության Ձեզ է ներկայացվում «Անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին 2002թ. հոկտեմբերի 7-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրության նախագծի ոչ պաշտոնական հայերեն թարգմանությունը և կնքման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանությունը ընդունելի է համարել վերոնշյալ նախագծի 2-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունը, որի վերաբերյալ 19.02.2014թ. թիվ 2/5-1-372 գրությամբ հայտնվել է ՀՀ կառավարության աշխատակազմին:

Առդիր՝ «4» թերթ:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գեներալ-մայոր **Վարդան Եղիազարյան**

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի
նախարարություն
01942

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին 2002թ. հոկտեմբերի 7-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

Հաշվի առնելով անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերում համագործակցությունը շարունակելու շահագրգռվածությունը, «Անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին 2002թ. հոկտեմբերի 7-ի Համաձայնագիրը ստորագրած Կողմերը առաջարկել են երկարացնել համագործակցությունն այդ ոլորտում:

Արձանագրությունը բաղկացած է երկու հոդվածից:

Հաշվի առնելով, որ Արձանագրության գործողության ժամկետը նախատեսում է 5 տարի, ապա Արձանագրության ստորագրումը Կողմերին հնարավորություն կնձեռնի Համաձայնագրի գործուղության ժամկետը լրանալուց հետո ամեն անգամ ավտոմատ դրա գործողության ժամկետը երկարաձգել ևս 5 տարի ժամանակահատվածով, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:

Արձանագրության 2-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում է.

«Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից և ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին այն ստորագրած Կողմերի կողմից երրորդ գրավոր ծանուցագիրն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից»:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. *«Եթե միջազգային պայմանագրով նախատեսվում է, որ դա ուժի (գործողության) մեջ է մտնում ստորագրման պահից, կամ մինչև ուժի մեջ մտնելը պայմանագիրը ամբողջությամբ կամ որոշակի մասով կարող է ժամանակավորապես կիրառվել, ապա հայկական կողմից այդ պայմանագիրն ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը պարտավոր է բանակցությունների ընթացքում՝ նախքան ստորագրելը, մյուս կողմի հետ հասնել այն բանին, որ տեքստի նման դրույթները փոխարինվեն այնպիսի դրույթներով, որոնք բացառեն հայկական կողմի համար*

պայմանագրի կիրառումը նախքան սույն օրենքով սահմանված կարգով դրա վավերացումը կամ հաստատումը:

Այդպիսի համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում հայկական կողմից իրավասու կամ հատուկ լիազորություններ ունեցող անձը նման դրույթներ պարունակող պայմանագիրն ստորագրելիս պետք է վերապահում կատարի՝ նշելով, որ այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնելու (կիրառվելու է) ներպետական ընթացակարգերով այն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո»:

Առաջնորդվելով վերոնշյալ օրենքի համապատասխան դրույթից ՀՀ արտաքին գործերի, ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունները նշյալ Արձանագրության ստորագրման օրվանից դրա ժամանակավորապես կիրառման վերաբերյալ հայտնել են իրենց դիրքորոշումը, որը ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում «Անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին 2002թ. հոկտեմբերի 7-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության ստորագրումը:

ՀՀ ոստիկանության Շտաբի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր **Վարդան Եղիազարյան**